

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՃՈՒԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
դասախոս
merriekhachatryan@gmail.com

DOI: 10.54503/2579-2903-2024.1-131

Համառոտագիր

ՀՀ իրավական համակարգում ներդրված առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը ենթադրում է քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննություն, որի նպատակը հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարն է: Գույքի օրինական ծագումը չհաստատվելու դեպքում գույքը կարող է բռնագանձվել հոգուտ պետության մեղադրական դատավճռի, ընդհուպ հարուցված քրեական գործի բացակայության պայմաններում, ինչը առաջ է բերում մի շարք հիմնահարցեր: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանում քննվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի սահմանադրականության հարցը, իսկ դատական պրակտիկան գտնվում է ձևավորման փուլում:

Սույն հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության եզրափակիչ փուլին՝ վճռի կայացմանը: Մասնավորապես, քննարկվում են վճռի կայացման առանձնահատկությունները և այն հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պարզման գործն ըստ էության լուծելու համար: Ուսումնասիրելով գործող կարգավորումները՝ հետևություն է կատարվել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնները բավարար չեն հայցի հիմքի հիմնավորվածությունը գնահատելու համար:

Հոդվածում քննարկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքին համարժեք գումարի բռնագանձման պահանջով փոխարինելու դեպքերը և առաջարկվել այդպիսի պահանջ ներկայացնելու հայցվորի իրավունքի որոշ սահմանափակումներ: Միջազգային փաստաթղթերի, այլ պետությունների օրենսդրության և դատական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են առաջարկություններ, որոնք միտված են միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց, ապօրինի ծագում ունեցող գույք, շուկայական արժեք, Օրենքով պաշտպանվող իրավունք, վճիռ, գույքի բռնագանձման անհնարինություն, ընթացակարգային երաշխիք, շահագրգիռ անձ:

SPECIFICS OF DECISION MAKING ON THE CLAIM FOR CONFISCATION OF PROPERTY OF ILLEGAL ORIGIN

MERI KHACHATRYAN

PhD student, Lecturer at the Chair of Civil Procedure at YSU Faculty of Law
merriekhachatryan@gmail.com

Abstract

The institution of non-conviction-based asset confiscation, introduced in the legal system of the Republic of Armenia, involves the examination of claims regarding the confiscation of property of illegal origin in civil proceedings. This measure aims to combat crime and corruption. If the legal origin of the property is not confirmed, the property can be confiscated in favor of the state without a guilty verdict, even in the absence of a criminal case. This has raised several issues. Furthermore, the Constitutional Court of the Republic of Armenia is reviewing the constitutionality of the “Law of the Republic of Armenia on the Confiscation of Property of Illegal Origin,” and judicial practices are currently being established.

Within the framework of present study, we refer to the final stage of the examination of claims for confiscating property of illegal origin, specifically the decision-making process. We discuss the specifics of making the decision and the scope of the issues that need clarification in order to substantially resolve the case. Upon studying the existing regulations, we concluded that the general rules outlined in the Civil Procedure Code of the Republic of Armenia are insufficient for assessing the justification of the basis of the claim.

The article discusses instances of replacing the claim for confiscating property of illegal origin with a claim for confiscating a sum equivalent to the market value of said property. It also suggests some limitations on the plaintiff's right to submit such a claim. Drawing from the study of international documents, legislation, and judicial practices of other states, the article presents recommendations aimed at ensuring a uniform legal practice.

Keywords and phrases. investigation of the grounds for filing a claim, claim for confiscation of property of illegal origin, property of illegal origin, market value, right protected by law, judgment, impossibility of confiscation of property, procedural guarantee, interested person.

ОСОБЕННОСТИ ПРИНЯТИЯ РЕШЕНИЯ О ТРЕБОВАНИИ КОНФИСКАЦИИ СОБСТВЕННОСТИ НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ

МЕРИ ХАЧАТРЯН

Преподаватель кафедры гражданского процессуального права
юридического факультета ЕГУ,
аспирант
merriekhachatryan@gmail.com

Аннотация

Введенный в правовую систему Республики Армения институт конфискации имущества без вынесения обвинительного приговора предполагает рассмотрение

исков о конфискации имущества незаконного происхождения в порядке гражданского судопроизводства. Эта мера направлена на борьбу с преступностью и коррупцией. Если законное происхождение имущества не подтверждено, имущество может быть конфисковано в пользу государства без обвинительного приговора, даже при отсутствии возбуждения уголовного дела, что поднимает ряд ключевых вопросов. Более того, Конституционный суд Республики Армения проверяет конституционность «Закона Республики Армения о конфискации имущества незаконного происхождения», и в настоящее время судебная практика находится в стадии формирования.

В рамках настоящего исследования рассматривается заключительный этап рассмотрения исков о конфискации имущества незаконного происхождения, а именно процесс принятия решений. Обсуждаются особенности принятия решения и круг вопросов, которые требуют разъяснения для разрешения дела по существу. Изучив действующие нормативные акты, мы пришли к выводу, что общие правила, изложенные в Гражданском процессуальном кодексе Республики Армения, недостаточны для оценки обоснованности оснований иска.

В статье рассматриваются случаи замены иска о конфискации имущества незаконного происхождения иском о конфискации суммы, эквивалентной рыночной стоимости указанного имущества. Предложены некоторые ограничения права истца предъявлять такое требование. На основе изучения международных документов, законодательства и судебной практики других государств в статье представлены рекомендации, направленные на обеспечение единой правоприменительной практики.

Ключевые слова и словосочетания: исследование оснований для предъявления иска; иск о конфискации имущества незаконного происхождения; имущество незаконного происхождения; рыночная стоимость; охраняемое законом право; судебное решение; невозможность конфискации имущества; процессуальная гарантия; заинтересованное лицо.

Ներածություն

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկություններով պայմանավորված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի հիման վրա հարուցվող գործերի քաղաքացիական դատավարության կարգով քննությունն իրականացվում է տարբերակված կանոնների հիման վրա: Քննարկվող վարույթին բնորոշ մինչդատական փուլի առկայությունը, որը դրսևորվում է մինչև հայցադիմումի ներկայացումը պատասխանողի գույքի և եկամուտների վերաբերյալ ուսումնասիրության իրականացմամբ, ինչպես նաև ապացուցման տարբերակված կանոնների և ապացուցողական կանխավարկածի կիրառումը իրենց ազդեցությունն են ունենում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման հարցում ևս: Գործող դատավարական ընդհանուր կանոնները բավարար չափով չեն ապահովում գործին մասնակցող անձանց ընթացակարգային երաշխիքների և օրենսդրությամբ հետապնդած նպատակների իրացումը, ինչը առավել հրատապ է դարձնում տարբերակված կանոնների մշակումը: Քննարկվող ինստիտուտի գործադրումը առնչվում է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքի հետ, քանի որ գուգորդվում է անձի փաստացի տիրապետման ներքո գտնվող գույքը հօգուտ պետության բռնագանձելով: Հետևաբար՝ դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակի ճիշտ որոշումը առանցքային նշանակություն կունենա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հիմնավորված և օրինական վճիռ կայացնելու համար:

Հետազոտության տեսամեթոդական հիմքեր և ուսումնասիրության մեթոդներ. Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ հետազոտության մեթոդոլոգիական հիմքը համընդհանուր՝ դիալեկտիկական մեթոդն է: Հատուկ մեթոդներից մեծապես կիրառվել է համեմատախրավական, ձևական-իրավաբանական, իրավական նորմերի մեկնաբանման, համակարգային կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Ստացված արդյունքներ. Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո և կողմերի ներկայացրած ապացույցները գործի դատաքնության ընթացքում հետազոտելուց հետո դատարանը ձեռնամուխ է լինում վճռի կայացմանը: Խախտված կամ վիճարկվող իրավունքի դատական պաշտպանությունը հանգում է գործով հաստատված հանգամանքների և հավաքված ապացույցների հիման վրա կողմերի իրավունքները և պարտականությունները հաստատելուն **[1, էջ 153–154]**, որը իրականացվում է գործն ըստ էության լուծելու արդյունքում:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման պայմանները սահմանված են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի **[2]** (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

Նշված կարգավորումից հետևում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի կայացման համար դատարանը պետք է հաստատի գույքի իրավական վիճակը, այն է՝ Օրենքի իմաստով գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը: *Այլ կերպ՝ դատարանը կողմերի ներկայացրած փաստարկների, առարկությունների և դրանց հիմքում դրված ապացույցների հեղազույգության արդյունքում պետք է որոշի՝ արդյոք հայցադիմումով պահանջվող գույքերը Օրենքի իմաստով համարվում են ապօրինի ծագում ունեցող, թե ոչ:*

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի վերաբերյալ վճռի կայացման առանձնահատկությունները վեր հանելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է քննարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տեսակը:

Այսպես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը ուղղված է պատասխանողին, սակայն դա չի ենթադրում հայցվորի և պատասխանողի միջև որոշակի իրավահարաբերության առկայությունը հաստատելու կամ պատասխանողին հայցվորի օգտին որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջ, ինչը բնորոշ է կատարողական (վճռող) հայցին: Այսինքն՝ պաշտպանվող սուբյեկտիվ իրավունքը հանգում է ոչ թե պատասխանողին որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելուն, իսկ չկատարման դեպքում՝ պահանջը հարկադիր կատարելուն, այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վիճելիությունը վերացնելուն, գույքի իրավական կարգավիճակը որոշելուն, և որպես արդյունք՝ վիճելի գույքի նկատմամբ հայցվորի իրավունքը ճանաչելուն: Իսկ իրավունքի վիճելիությունը իր հերթին ծագում է իրավասու մարմնի կողմից հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու փաստերի ուժով: Այսինքն՝ գույքի իրավական կարգավիճակը, այն է՝ գույքի ապօրինի ծագումը, դատարանի կողմից հաստատելը հիմք է այդպիսի գույքը հոգուտ պետության բռնագանձելու համար:

Ի տարբերություն վճռող հայցերի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացմամբ պատասխանողը չի պարտավորեցվում կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, ինչը անհրաժեշտ պայման է վճռող հայցերով կայացվող դատական ակտի կատարելիությունը ապահովելու համար: Ընդ որում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճիռներով, որպես կանոն, կատարողական վարույթներ չեն հարուցվում, քանի որ վճռի կայացումը հիմք է բռնագանձվող գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը գրանցելու համար: Միևնույն ժամանակ վճռի կայացումը հիմք է նաև վիճելի գույքի նկատմամբ պատասխանողի սեփականության իրավունքի դադարման համար այն հիմնավորմամբ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի [3] 279-րդ և 288.1 հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանի վճռով ապօրինի ծագում ունեցող գույք բռնագանձելը դիտվում է անձի սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք:

Իրավիճակը փոխվում է այն դեպքում, երբ գույքը բռնագանձելու անհնարինության կամ այն բարեխիղճ ձեռք բերողին փոխանցվելու կամ Օրենքով նախատեսված այլ դեպքերում կարող է պահանջվել պատասխանողից բռնագանձել հայց ներկայացնելու պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքը, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումարը: Ստացվում է, որ նման պարագայում վճռով պատասխանողին առաջադրվում է դրամային պարտավորություն, որի ծագման հիմքը ոչ թե կողմերի միջև արդեն իսկ առկա վիճելի իրավահարաբերության հաստատումն է, այլ անձի կողմից ապօրինի ծագում ունեցող գույք ձեռք բերած լինելու կամ այդպիսի գույքի իրական շահառու հանդիսանալու հանգամանքը հաստատող վճիռը: Ընդ որում, ապօրինի ծագում ունեցող գույք բռնագանձելու պահանջն ինքնին չի ենթադրում, որ գույքը բռնագանձելու անհնարինության դեպքում վճռով կարող է պատասխանողից բռնագանձվել գույքի շուկայական արժեքը, քանի դեռ համապատասխան պահանջ դատարանին չի ներկայացվել:

Հարկ ենք համարում մասնավորեցնել, որ Օրենքով հստակ սահմանված են այն դեպքերը, երբ հայցվորը ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձելու պահանջի փոխարեն կարող է պահանջել պատասխանողից բռնագանձել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար: Մասնավորապես, այդ դեպքերն են՝

1. գույքը բնեղենով բռնագանձելու կամ առանձնացնելու կամ նույնականացնելու անհնարինությունը,
2. գույքը բարեխիղճ ձեռք բերողին փոխանցված լինելը,
3. գույքը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելը և հայցի ներկայացման պահի դրությամբ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկություններ առկա չլինելը (այս դեպքում բռնագանձվում է գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումար),
4. գույքը այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելը:

Եթե առաջին երեք դեպքերը վերաբերում են գույքը բռնագանձելու փաստացի անհնարինությանը կամ ՀՀ օրենսդրությամբ բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների պաշտպանությանը, ապա վիճելի ենք համարում գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձման պահանջի ներկայացումը այն դեպքում, երբ այդ գույքը ծանրաբեռնված է այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող

իրավունքներով և չի վերացել այդ գույքը բռնագանձելու հնարավորությունը:

Ըստ Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է այլ անձանց՝ սույն Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտպանվող իրավունքներով, ապա իրավասու մարմինն իր ընտրությամբ կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում կամ հայցի ներկայացման պահի դրությամբ այդպիսի գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումարի բռնագանձում:

Իսկ Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անձին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքները (այսուհետ՝ սույն հոդվածի իմաստով՝ գույքային իրավունքներ) պահպանվում են, եթե իրավասու մարմինը չի ապացուցում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:

Նշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ այն դեպքում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է պատասխանողի հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքներով, և հայցվորը չի կարողանում ապացուցել այդ իրավունքները ծագելու պահին անձի անբարեխղճությունը, ապա հայցվորը գույքը բնեղենով բռնագանձելու փոխարեն կարող է պահանջել բռնագանձել գույքի շուկայական արժեքի չափով գումար: Այսինքն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հնարավորությունը վերացած չլինելու պայմաններում հայցվորին տրամադրվում է լայն հայեցողություն՝ պատասխանողին դրամային արտահայտությամբ բռնագանձման պահանջ ներկայացնել: Իսկ դրամական պահանջ ներկայացվելու դեպքում պահանջը կարող է բավարարվել նաև անձի օրինական եկամուտներից:

Գտնում ենք, որ այդպիսի մոտեցումը շեղվում է վարույթի հետապնդած նպատակից, քանի որ Օրենքի նպատակն ապօրինի ծագում ունեցող գույքը օրինական շրջանառություն վերադարձնելն է **[4, կետ 21]**: Իսկ ի սկզբանե գույքի դեմ ներկայացված հայցն անձի դեմ ներկայացվող հայցով փոխարինելու համար պետք է սպառված լինի այդ գույքը բնեղենով բռնագանձելու հնարավորությունը: Համանման տրամաբանություն է գործում նաև անհիմն հարստացման հիմքով գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնելու դեպքում, ըստ որի՝ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինությունն է հանգեցնում գույքի արժեքը հատուցելու պարտավորությանը:

Հատկանշական է, որ միջազգային կոնվենցիաներով ևս ամրագրված է ապօրինի ծագում ունեցող գույքին համարժեք ակտիվներ բռնագանձելու հնարավորությունը: Որպես օրինակ՝ «Կոռուպցիայի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի **[5]** 31-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, «Տրանսնացիոնալ հանցավոր համագործակցությունների դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի **[6]** 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով՝ հնարավոր է համարվում հանցագործություններից ստացված եկամուտներն ամբողջությամբ կամ մասնակիորեն այլ գույքի վերածվելու կամ փոխակերպվելու դեպքում դրանց բռնագանձումը, ինչպես նաև այդպիսի եկամուտները օրինական աղբյուրներից ձեռք բերված գույքին միացվելու դեպքում այդ գույքի արժեքին համարժեք գույքի բռնագանձումը:

Ավելին, Բուլղարիայի և Վրաստանի օրենսդրությամբ ևս ապօրինի ծագում ունեցող գույքին համարժեք դրամական միջոցի բռնագանձում թույլատրելի է համարվում բացառապես այդպիսի գույքի բռնագանձման անհնարինության

դեպքում [7, 142–րդ, 151–րդ հոդված, 8, 356⁵ հոդված 3–րդ մաս]:

Կարծում ենք, որ գույքի բռնագանձման փաստացի կամ Օրենքով սահմանված անհնարինությունը առկա է գույքը բարեխիղճ ձեռք բերողին օտարելու, գույքի նույնականացման, առանձնացման անհնարինության, գույքը ՀՀ սահմաններից դուրս գտնվելու և բռնագանձման համապատասխան ընթացակարգի բացակայության, գույքը ոչնչացված լինելու, տեսակային հատկանիշով որոշվող գույքը տնօրինելու դեպքում: Մինչդեռ այլ անձանց գույքային իրավունքներով ծանրաբեռնված լինելը անպայմանորեն չի հանգեցնում գույքի բռնագանձման անհնարինության: Մասնավորապես՝ այդպիսի իրավունքների շարքին են դասվում վարձակալության, գրավի, կառուցապատման, սերվիտուտի իրավունքները, որոնք ըստ Օրենքի՝ պահպանվում են ապօրինի ծագում ունեցող գույքը վճռի հիման վրա պետությանը փոխանցվելուց հետո: Թեև այդպիսի իրավունքները կարող են ժամանակավոր խոչընդոտներ հանդիսանալ սեփականության իրավունքից բխող որոշ իրավագործությունների իրականացման հարցում (գույքը օգտագործել, տիրապետել), այնուամենայնիվ, այդ գույքը բռնագանձելու դեպքում պետությունը ստանում է այդ գույքը տնօրինելու, որոշ դեպքերում տիրապետելու և օգտագործելու, ինչպես նաև ծանրաբեռնված իրավունքների հաշվին եկամուտ ստանալու հնարավորություն, ինչը խոսում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագործությունների գերակշիռ մասի իրականացման հնարավորության մասին:

Կարծում ենք, որ բացառություն է կազմում գույքը գրավի իրավունքով ծանրաբեռնված լինելը, քանի որ առկա է պարտապանի պարտավորության դիմաց այդ գույքի բռնագանձման իրական հնարավորություն, ինչը էապես նվազեցնում է այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից բխող իրավագործությունների իրականացումը: Պայմանավորված գրավի՝ որպես «բացարձակ» և «հետևելու իրավունքի» բնույթով [9]՝ գույքը գրավադրված լինելու և գործի քննության ընթացքում գրավով ապահովված պարտավորությունը կատարված չլինելու դեպքում արդարացված կարելի է համարել գրավ դրված գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձման պահանջի առաջադրումը: Նշվածից հետևում է, որ պատասխանողին ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքին համարժեք գումարի բռնագանձման պահանջ առաջադրելու իրավունքը պետք է թիփ գույքը բնեղենով բռնագանձելու անհնարինությունից կամ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից բխող իրավագործությունների իրականացման էական նվազումից:

Անփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումար բռնագանձելու պահանջ պարտասխանողին ներկայացնելու հիմքը պետք է լինի ապօրինի ծագում ունեցող գույքը պարտասխանողից բռնագանձելու փաստացի կամ Օրենքով սահմանված անհնարինությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքը այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելու փաստին ինքնին չի կարող դիմել գույքի շուկայական արժեքը պարտասխանողից բռնագանձելու պահանջի հիմք: Նման պահանջը բավարարելու համար դատարանը պետք է պարզի, թե արդյոք այդ գույքի՝ պարտասխանողի հետ չփոխկապակցված անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելը էականորեն նվազեցնում է փյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման իրավագործությունները, թե ոչ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության

օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) [10] 191-րդ հոդվածը նախատեսում է այն հարցերի սպառիչ շրջանակը, որոնք ենթակա են լուծման դատարանի կողմից վճիռ կայացնելիս: Այդ հարցերի շարքին են դասվում ներկայացված ապացույցների գնահատումը, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցված լինելու մասին հետևություններ կատարելը, տվյալ գործով կիրառման ենթակա իրավական նորմերը որոշելը և այլն:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ կարծում ենք, որ դատարանը չի կարող սահմանափակվել Օրենսգրքով նախատեսված վճռի կայացման ընդհանուր կանոններով և պետք է կիրառի հայցի հիմքի հիմնավորվածությունը գնահատելու տարբերակված չափանիշներ: Ինչպես նշեցինք, Օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման համար անհրաժեշտ է համարում Օրենքի իմաստով գույքի ապօրինի ծագման փաստը և հայցադիմումի ներկայացման պահին այդ գույքի շուկայական արժեքը 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցելու փաստը ապացույցների գնահատմամբ ապացուցված համարելը: Մինչդեռ կարծում ենք, որ նշված հանգամանքները ապացուցված համարելու հետևությունները անհրաժեշտ են, բայց դեռևս բավարար չեն ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձելու համար:

Վերոնշյալի համատեքստում հատկանշական է, որ վճռի կայացման տարբերակված կարգավորումներ, որպես կանոն, նախատեսված չեն նաև այլ պետությունների օրենսդրությամբ, սակայն դատական պրակտիկան վեր է հանում այն հարցերի շրջանակը, որը դատարանը պարզում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների ընթացքում վճիռ կայացնելիս: Որպես Օրինակ՝ Բուլղարիայի սահմանադրական դատարանը արտահայտել է դիրքորոշում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի քննության արդյունքում հաստատման ենթակա փաստերի շրջանակի վերաբերյալ և նշել, որ պատասխանողի օրինական եկամուտների և ձեռք բերված գույքի էական անհամապատասխանությունը պարզելու համար դատարանը պետք է որոշի՝

1. ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբի և ավարտի դրությամբ պատասխանողին պատկանող գույքը,
2. պատասխանողի օրինական աղբյուրներից այդ գույքի ավելացված չափը,
3. ուսումնասիրվող ժամանակահատվածում պատասխանողի կատարած ծախսերը [11]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Յորդանովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի» գործով Բուլղարիայի՝ ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծության արդյունքում նշել է, որ դատարանները պետք է պարզեն պատասխանողի գուտ եկամուտը, այսինքն՝ ամբողջ ստացված եկամտից մասհանվեն առօրյա ծախսերը, անհրաժեշտ կամ փաստացի կատարված այլ ծախսերը, այնուհետև այն համադրեն ուսումնասիրվող ժամանակահատվածում պատասխանողի կողմից ձեռք բերված գույքի արժեքի հետ [12, կետ 43]:

Անդրադառնալով ներպետական կարգավորումներին՝ Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ *պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով*:

Նշված կարգավորումից հետևում է, որ Օրենքը չի հստակեցնում այն փաստերի սպառնիչ շրջանակը, որոնք ենթակա են պարզման գույքի ապօրինի ծագումը որոշելու համար: Իհարկե, Օրենքը նախատեսում է, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործադրելու համար պետք է ապացուցվի պատասխանողին պատկանող գույքը վերջինիս օրինական եկամուտներով չհիմնավորվելու փաստը, սակայն չի նշվում անձի կողմից կատարված ծախսերի մասին, թե արդյոք գույքի ձեռքբերման հետ չկապված ծախսերը պետք է նվազեցվեն օրինական եկամուտներից, թե ոչ:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից դատարան ներկայացված հայցադիմումների ուսումնասիրությունից երևում է, որ այդ ծախսերը նվազեցվում են անձի օրինական եկամուտներից, սակայն այս հարցի վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկա դեռևս առկա չէ: Այդուհանդերձ, կարծում ենք, որ միասնական իրավակիրառ պրակտիկա ապահովելու համար անհրաժեշտ է մասնավորեցնել գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը ապացուցված համարելու համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը:

Վերոնշյալը, ինչպես նաև Օրենքի ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճիռ կայացնելիս դատարանը պետք է հետևություններ կատարի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքներն ապացուցված կամ չապացուցված լինելու վերաբերյալ.

1. իրավասու մարմնի կողմից սահմանված ուսումնասիրվող ժամանակահատվածում պատասխանողի կողմից վիճելի գույքը ձեռք բերված լինելը, համապատասխան պահանջի դեպքում՝ պատասխանողի՝ գույքի իրական շահառու հանդիսանալը,
2. նույն ժամանակահատվածում պատասխանողի ստացած օրինական եկամուտների չափը,
3. նույն ժամանակահատվածում պատասխանողի կատարած ծախսերի չափը,
4. այն փաստերը, որոնց վերաբերյալ ապացույց պատասխանողը չի կարող ներկայացնել՝ համապատասխան ապացույցները ոչ իր մեղքով ոչնչացված կամ կորած լինելու պատճառով,
5. ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար բռնագանձելու պահանջ ներկայացված լինելու դեպքում այդ գույքը բնեղենով բռնագանձելու անհնարինության փաստը,
6. վիճելի գույքը այլ անձի փոխանցված լինելու դեպքում վերջինիս բարեխիղճ ձեռք բերող չհանդիսանալու փաստը,
7. հայցադիմում ներկայացնելու օրվա դրությամբ հայցադիմումով պահանջվող գույքերի շուկայական արժեքները:

Բացի այդ, Օրենքի 191-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է գործի դատաքնությունը վերսկսելու հնարավորությունն այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում գործում առկա ապացույցները լրացուցիչ հետազոտելու միջոցով պարզել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Ուստի՝ այն դեպքում, երբ դատարանը գործի քննության ընթացքում չի պարզել գործի համար նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները, ապա գործի դատաքնությունը վերսկսելը կարող է հանդիսանալ այդ հանգամանքները պարզելու լրացուցիչ գործիք:

Հարկ ենք համարում ընդգծել, որ նշված հանգամանքները պարզելուց զատ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում

իրավասու մարմնի իրականացրած գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ վարույթում շահագրգիռ անձանց ընթացակարգային երաշխիքները ապահովված լինելը, գործի դատական քննության ընթացքում ևս պետք է հանդիսանան դատական վերահսկողության առարկա իրենց համարժեք դատավարական հետևանքներով: *Այսինքն՝ Դատարանը պետք է ոչ միայն պարզի, թե արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն առավել հավանական են դարձնում գույքի անօրինական ծագումը, այլ նաև պարզի, թե արդյոք այդ փաստերը հիմնավորող ապացույցները ձեռք բերելու նպատակով իրականացված ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինը պահպանել է շահագրգիռ անձանց՝ Օրենքով ամրագրված ընթացակարգային երաշխիքները, թե ոչ:*

Հաշվի առնելով, որ քննարկվող վարույթները ուղեկցվում են անձի իրավունքների միջամտությամբ՝ ուստի դատարանը գործի քննության ընթացքում պետք է գնահատի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված ապացույցների համոզիչ լինելը և միաժամանակ, վարույթի ընթացքում ընթացակարգային երաշխիքների պահպանված լինելը [13]:

Թեկուզև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթն իր բնույթով քաղաքացիական է՝ մասնագիտական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել այն մասին, որ այս վարույթներով պատասխանողներին պետք է տրվեն այնպիսի ուժեղացված պաշտպանության միջոցներ, որոնք տրվում են քրեական դատավարության կողմին, քանի որ քաղաքացիական դատավարության առավել մեղմ միջոցները ենթադրվում են «անարդար» այն պարագայում, երբ առկա է պատասխանողի գույքի բռնագանձման ռիսկ [14, էջ 25]:

Ներպետական օրենսդրությամբ այդպիսի երաշխիքներից են դիտվում ուսումնասիրության ընթացքում որոշ կատեգորիայի ապացույցներ ձեռք բերելու, ուսումնասիրվող գույքի վրա արգելանք դնելու, ապացույցները նախնական ապահովելու նկատմամբ դատական վերահսկողությունը: Նշվածից զատ՝ կարծում ենք, որ գործն ըստ էության քննելու տեսանկյունից դատավարական առումով էական հանգամանքներ են համարվում հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը Օրենքով սահմանված հիմքերի հիման վրա սկսելու, ուսումնասիրության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցելու, իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու իրավաչափության պարզումը: Թվարկված գործողությունների իրավաչափությունը չպարզելու դեպքում կասկածի տակ է դրվում ամբողջ վարույթի օրինականությունը: Պատասխանողին սեփականության իրավունքից զրկումը չի կարող իրավաչափ համարվել այն պարագայում, երբ իրավասու մարմինը գործել է Օրենքով սահմանված պահանջների խախտմամբ, իսկ պատասխանողներին չեն տրվել համարժեք պաշտպանության միջոցներ և երաշխիքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը 2022 նոյեմբերի 21-ի թիվ ՍԴԴԿՈ-64 որոշմամբ [15] արտահայտել է դիրքորոշում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության իրավական նշանակության մասին: Մասնավորապես, նշվել է հետևյալը. «Օրենքի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության իրավասու մարմնի կողմից առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելու հիմքը հենց ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունն է: Այսինքն՝ դատախազի կողմից կայացված՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը կազմում է ՀՀ գլխավոր դատախազության իրավասու մարմնի կողմից դատարան ներկայացվող հայցադիմումի, հետևաբար և դրա հիման վրա իրականացվող դատական

քննության առանցքը:»

Իրավասու մարմնի կողմից կազմված եզրակացությունը, հանդիսանալով ուսումնասիրության արդյունքների ամփոփում, բովանդակում է Օրենքով սահմանված գործողությունների իրականացման ամբողջ ընթացքը: Եզրակացությունը կազմում է ներկայացվելիք հայցադիմումի հիմքը, որի շրջանակներում իրականացվում է գործի դատական քննությունը: Հետևաբար, գործն ըստ էության լուծելու շրջանակներում չի կարող անտեսվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը նախաձեռնելու կարգը պահպանված լինելու, ինչպես նաև վարույթով շահագրգռված անձանց՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքներով ապահովված լինելու հարցերը:

ՀՀ սահմանադրական դատարանը, վկայակոչված որոշմամբ անդրադառնալով նշված հարցին, գտել է, որ ինչպես ուսումնասիրություն սկսելու մասին որոշման, այնպես էլ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության վիճարկման հիմքում դրված փաստերի իրավաչափությանն անդրադարձ կարող է կատարվել հենց համապատասխան գործի դատական քննության ընթացքում: Ավելին, նշված փաստերը կարող են դատական քննության և գնահատման առարկա դառնալ նաև գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Հետաքրքրական է, որ ներպետական դատարաններն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ ևս անդրադարձել են ուսումնասիրության ընթացակարգին վերաբերող որոշ հարցերի: Մասնավորապես՝ քննվող գործերից մեկով դատարանը նշել է, որ ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման, ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու մասին որոշման իրավաչափությունը, դրանք իրավաչափ չդիտարկվելու դեպքում դրանց քաղաքացիադատավարական հետևանքները չեն կարող դասվել ապացուցման ենթակա փաստերի շարքին, հետևաբար, նման իրավական հարցադրման պատասխանը դատարանի կողմից կարող է վերջնականապես տրվել եզրափակիչ դատական ակտով [16]: Ստացվում է, որ ըստ դատարանի դիրքորոշման՝ վերոգրյալ հարցերը դասվում են ոչ թե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շարքին, այլ ընթացակարգային հարցեր են, որոնք ենթակա են պարզման կիրառման ենթակա իրավական նորմերի վերլուծության և գործի փաստերի համադրման շրջանակներում:

Ճիշտ է, դատարանները հակված են այն տեսակետին, որ ուսումնասիրության փուլում իրավասու մարմնի կողմից դրսևորած ոչ իրավաչափ վարքագծի, այլ ընթացակարգային խախտումների դատավարական հետևանք կարող է դիտվել ապացույցն անթույլատրելի ճանաչելը, որի համար հիմք է Օրենսգրքի այն կարգավորումը, ըստ որի՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է: Ակնհայտ է, որ այն սահմանում է չափազանց բարձր շեմ օրինականության հնարավոր խախտումներին արդյունավետ հակազդելու համար [17, էջ 182]: Ուստի՝ կարծում ենք, որ ուսումնասիրության օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը չի կարող սահմանափակվել վերը նշված կառուցակարգերով, քանի որ կան ընթացակարգային խախտումներ, որոնք չեն առնչվում կոնկրետ ապացույց ձեռք բերելուն, սակայն այդ խախտումն իր բնույթով կարող է հանգեցնել վարույթով շահագրգիռ անձանց իրենց ընթացակարգային երաշխիքներից օգտվելու հնարավորությունից զրկելուն, սակայն Օրենքը չի նախատեսում այդ խախտումներին համարժեք դատավարական հետևանքներ: Կարծում ենք, որ իրավասու մարմնի կողմից

ուսումնասիրության արդյունքների մասին շահագրգիռ անձանց չծանուցելու կամ վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորությունը չսպառելու դեպքում դատարանը պետք է հայցն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնի այն հիմնավորմամբ, որ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու կամ գույքի ապօրինի ծագման ենթադրությունները հերքվելու հնարավորության սպառումն անհրաժեշտ նախապայմաններ են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց դատարան ներկայացնելու համար: Միաժամանակ, հայցը առանց քննության թողնելու դեպքում իրավասու մարմինը չի զրկվում հետագայում կրկին հայցադիմում ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով՝ կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքի հիմնավորվածության գնահատման համար դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերը չեն սահմանափակվում գույքի ապօրինի ծագումը որոշելով, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ապահովված են եղել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդարակյան փուլում շահագրգիռ անձանց՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքները: Մասնավորապես, իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության արդյունքների մասին շահագրգիռ անձանց չծանուցելու կամ վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորությունը չսպառելու դեպքում դատարանը պետք է հայցը առանց քննության թողնելու մասին որոշում կայացնի, ինչը հետագայում չի զրկի իրավասու մարմնին կրկին հայցադիմում ներկայացնելու հնարավորությունից:

Եզրակացություն.

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Ապօրինի ծագում ունեցող գույքն այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելու դեպքում հայցվորի կողմից այդ գույքի շուկայական արժեքը բռնագանձելու պահանջ ներկայացնելը չի կարող ընդունելի համարվել միայն այդպիսի իրավունքներով ծանրաբեռնված լինելու փաստի ուժով: Նման պահանջը բավարարելու համար դատարանը պետք է պարզի, թե արդյոք այդ գույքը պատասխանողի հետ չփոխկապակցված անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելը էականորեն նվազեցնում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման իրավագործությունները, թե ոչ:

2. Օրենքով նախատեսված չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, մյուս կողմից, ըստ Օրենքի՝ գույքի բռնագանձման վճիռ կայացնելու հիմքը գույքի ապօրինի ծագման և գույքի շուկայական արժեքը Օրենքով սահմանված շեմը գերազանցելու փաստերի հաստատումն է: Կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճիռ կայացնելիս դատարանը պետք է հետևություններ կատարի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքներն ապացուցված կամ չապացուցված լինելու վերաբերյալ.

1. իրավասու մարմնի կողմից սահմանված ուսումնասիրվող ժամանակահատվածում պատասխանողի կողմից վիճելի գույքը ձեռք բերված լինելը, համապատասխան պահանջի դեպքում՝ պատասխանողի՝ գույքի իրական շահառու հանդիսանալը,

2. նույն ժամանակահատվածում պատասխանողի ստացած օրինական եկամուտների չափը,
3. նույն ժամանակահատվածում պատասխանողի կատարած ծախսերի չափը,
4. այն փաստերը, որոնց վերաբերյալ ապացույց պատասխանողը չի կարող ներկայացնել համապատասխան ապացույցները ոչ իր մեղքով ոչնչացված կամ կորած լինելու պատճառով,
5. ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար բռնագանձելու պահանջ ներկայացված լինելու դեպքում այդ գույքը բնեղենով բռնագանձելու անհնարինության փաստը,
6. վիձելի գույքը այլ անձի փոխանցված լինելու դեպքում վերջինիս բարեխիղճ ձեռք բերող չհանդիսանալու փաստը,
7. հայցադիմում ներկայացնելու օրվա դրությամբ հայցադիմումով պահանջվող գույքերի շուկայական արժեքները:

3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքի հիմնավորվածության գնահատման համար դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերը չեն սահմանափակվում գույքի ապօրինի ծագումը որոշելով, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ապահովված են եղել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում շահագրգիռ անձանց՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքները: Մասնավորապես, իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության արդյունքների մասին շահագրգիռ անձանց չձանդուղեելու կամ վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորությունը չսպառելու դեպքում դատարանը պետք է հայցը առանց քննության թողնելու մասին որոշում կայացնի, ինչը հետագայում չի զրկի իրավասու մարմնին կրկին հայցադիմում ներկայացնելու հնարավորությունից:

Գրականության ցանկ

1. **Гурвич М.А.**, Лекции по советскому гражданскому процессу, М., «Красная звезда», 1950, 194 с.
2. Հայաստանի Հանրապետության օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ընդունվել է 16 ապրիլի 2020թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05 մայիսի 1998թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
4. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ընդունման մասին հիմնավորումներ, http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf (15.01.2024):
5. «Կոռուպցիայի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, ընդունվել է 09.12.2003 թ., <https://www.unodc.org/unodc/en/treaties/CAC/> (11.01.2023):
6. «Տրանսնացիոնալ հանցավոր համագործակցությունների դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, Նյու Յորք, 2004, https://www.unodc.org/documents/middleeastandnorthafrica/organised-crime/UNITED_NATIONS_CONVENTION_AGAINST_TRANSNATIONAL_ORGANIZED_CRIME_AND_THE_PROTOCOLS_THERETO.pdf (21.01.2024):
7. «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի օրենք https://www.minfin.bg/upload/38434/CounterCorruption_and_Unlawfully_Acquired_Assets_Forfeiture_Act.pdf (18.01.2024):
8. Վրաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 1997, <https://matsne.gov.ge/en/document/download/29962/92/en/pdf> (18.01.2024):

9. «Սեյլր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:
10. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդված 1, 2.1 մաս:
11. Բուլղարիայի սահմանադրական դատարանի՝ 13.10.2012 թվականի որոշումը (Решение № 13 от 13.10.2012 г. на КС по к. д. № 6/2012 г.) <https://dv.parliament.bg/DVWeb/showMaterialDV.jsp;jsessionid=C0E6BB7611B619A47E0DED15CC930BE3?idMat=69622> (18.01.2024):
12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը Յորդանովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի գործով, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%5C%22001-227713%22%5D%7D> (14.01.2024):
13. Bentham M., “‘Dirty Money’ Court Battle over £3.2m Jewellery,” Evening Standard, November 8, 2021, <https://www.standard.co.uk/news/crime/dirty-money-court-battle-zamira-hajiyeva-jewellery-b964954.html>. (21.01.2024):
14. Совет Европы, Использование ареста и конфискации без вынесения обвинительного приговора, 2021, <https://rm.coe.int/the-use-of-non-conviction-based-confiscation-ru-final/1680a21d75> (21.01.2024):
15. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴԴԿՈ-64 որոշումը, 21 նոյեմբեր 2022թ., https://www.concourt.am/decision/decisions/637f260a90823_sddkv-64.pdf (14.01.2023):
16. Թիվ ՀԿԴ/0019/02/22 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 19.10.2023 թվականի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը:
17. Hovhannisyanyan V., Markosyan T., The Institutional Features Of The Judicial Over-Sight On The Legitimacy Of The “Pre-Judicial” Phase Of The Proceedings For Confiscation Of Property Of Illicit Origin, Bulletin Of Yerevan University C: Jurisprudence, Vol. 14 No. 2 (39) (2023), https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-jurisprudence/article/view/vol14_no2_2023_pp177-184/vol14_no2_2023_pp177-184.pdf (21.01.2024):

The article has been submitted for publication: 18.03.2024
Հոդվածը ներկայացվել է փափագությամբ. 18.03.2024
Статья представлена к публикации: 18.03.2024

The article is sent for review: 03.04.2024
Հոդվածն ուղարկվել է գրախոսության. 03.04.2024
Статья отправлена на рецензию: 03.04.2024

The article is accepted for publication: 22.04.2024
Հոդվածն ընդունվել է փափագությամբ. 22.04.2024
Статья принята к печати: 22.04.2024